Աշխարհացույցի մարկային մենթորների թիմը

Ի հպորացում ավգային նորարար դպրոցի

Վիզուալ Հայաստան զարգացման հիմնադրամ · Մանուկեան Սիմոն հիմնադրամ · աշխարհացույց

Աշխարհացույցի մարկային վերապատրաստումների եռաստիճան ծրագրի հայեցակարգ

Տեսլական և նպատակ

«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի «Brainograph» նորարարական կրթական տեխնոլոգիայի և «Աշխարհացույց» կրթական նորարարական ծրագրի մեծացմանը զուգահեռ՝ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել և ապակենտրոնացնել Հիմնադրամի վերապատրաստումների ծրագրերը՝ համաժամանակյա և առկա ձևաչափով ՀՀ մարզերի բոլոր բնակավայրերի և Երևանի ուսուցիչներին կրթության շարունակական զարգացման հավասար հնարավորություն տալով:

Առաջատար և փոփոխվող գիտելիքն ուղիղ դեպի մարզի ուսուցչին հասցնելու նպատակով մշակվել է **Աշխարհացույցի մարկային վերապատրաստումների եռաստիճան ծրագիրը** հետևյալ նպատակով՝

- զարգացնել ուսուցիչների կրթական կարողությունները՝ հատուկ «Brainograph» տեխնոլոգիայի և «Աշխարհացույց» ծրագրի համատեքստում,
- աջակցել ուսուցիչների **դասավանդման մասնագիտական աճին**՝ ներառելով հմտություններ, մեթոդներ և ուսումնական տեխնոլոգիաներ,
- խթանել «Աշխարհացույց» կրթական նորարարական ծրագրերի մասին իրազեկվածության բարձրացումը,
- խթանել ուսուցիչների **միջմարզային համապարփակ համայնքի ձևավորումը**՝ մենթորական աջակցությամբ,
- վերափոխել մարզերի կրթական միջավայրը՝ լիցքավորելով այն **տեխնոլոգիական, գործնական և կազմակերպչական** հմտություններով,
- մարզերում ձևավորել **ակտիվ վերապատրաստված ուսուցչական համայնք**՝ որպես ինքնուրույն մենթորական ցանց,
- խթանել «Աշխարհացույց» հարթակի խորը **թափանցելիությունը և կիրառումը** ՀՀ դպրոցներում,
- վերհանել ծնողական համայնքի տեսանկյունից կրթական գործընթացներում առկա խնդիրները և խթանել ծնողների արդյունավետ և նպատակային ներգրավվածությունը կրթական գործընթացներում՝ իրազեկվածության բարձրացման միջոցով:

Ծրագիրը հավակնում է դառնալ խողովակ, որը կխթանի և կապահովի ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզի ուսուցչի շարունակական մասնագիտական և անձնային աճը՝ շնորհիվ տեղում մենթոր-ուսուցչի հետ հետևողական և թիրախային աշխատանքի: Ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերի առնվազն 2500 գործող ուսուցիչ պետք է անցնի այս վերապատրաստումների շրջափուլը, որոնցից առնվազն 1000-ը պետք է ստանա մասնագիտական մեթոդական խորացված գիտելիքներ:

Հիմնավորում և կարիք

Հիմնադրամը 2021 թվականից կրթական ծրագրեր է իրականացնում՝ ուղղված Հայաստանում հանրակրթության արդիականացմանն ու հզորացմանը: Այս ընթացքում Հիմնադրամի թիմը աշխատել է հարյուրավոր դպրոցների հետ, այցելել և տեղում շփվել հապարավոր ուսուցիչների և տնօրենների հետ, իրականացրել տարաբնույթ վերապատրաստումներ, դասալսումներ, կատարել բազմամակարդակ կարիքների գնահատում, մասնակցել կրթական խնդիրների քննարկումների, ստեղծել կրթական ռեսուրսներ և այլն: Դաշտային աշխատանքն ու այս փորձառությունը թույլ են տվել արձանագրել մի շարք խնդիրներ, որոնց մի մասը հասցեագրվում են սույն Ծրագրի շրջանակներում՝

- արդի ռեսուրսների և տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակ,
- դասավանդման հնացած մեթոդներ,
- խրախուսող նախաձեռնությունների և միջավայրի պակաս:

Առնվազն այս երեք հիմնապատճառների արդյունքում նորարարական կրթական ծրագրերը սկզբում առհասարակ բախվում են մերժողականությանը, ապա՝

1. ցածր կարողունակություններին,
2. ցածր մոտիվացիային կամ դրա բացակայությանը:

Ծրագրի բաղադրիչները

Ծրագիրը եռաստիճան է՝ բաղկացած երկու հիմնական հաջորդական և մեկ զուգահեռ ընթացող բաղադրիչներից, որոնք են.

1. «Brainograph» նորարարական կրթական տեխնոլոգիայի ճանաչման և գործածման առկա վերապատրաստումները,
2. Առարկայական խորը վերապատրաստումները՝ ըստ Աշխարհացույցի առարկաների (ցանկը տես՝ https://brainograph.com/),
3. Կենտրոնացված հաշվետու հանդիպումներ, իմաստային ինտեգրում Հիմնադրամի ծրագրերին:

1.1. «Brainograph» նորարարական կրթական տեխնոլոգիայի ճանաչման և գործածման առկա վերապատրաստումների շրջանակներում ուսուցիչները կստանան իրազեկում, գրանցման աջակցություն, գործիքակազմի ու ֆունկցիոնալի ծանոթացում, հմտությունների ու հնարների փոխանցում:
Այս բաղադրիչը հաջողությամբ ավարտելու դեպքում ուսուցիչները կունենան անհրաժեշտ բազա առավել խորացված՝ հոսքային ուսուցման համար, որը կապահովվի Ծրագրի երկրորդ բաղադրիչով:

2.1. Առարկայական խորը վերապատրաստումների շրջանակներում կիրականացվեն Աշխարհացույցի վերապատրաստումների տրամաբանություններից բխող և հարթակի առարկաներին համապատասխան վերապատրաստումներ:
Այս փուլում նախատեսվում է ունենալ ՀՀ բոլոր մարզերը ներկայացնող Աշխարհացույցի առարկայական վերապատրաստված և հարթակը տիրապետող ուսուցիչներ:

2.2. Առարկայական վերապատրաստումներին մասնակից ուսուցիչների գիտելիքների ստուգում և մասնակցության հավաստագրերի տրամադրում:

3.1. Կենտրոնացված հաշվետու հանդիպումները կընթանան վերապատրաստումների այս երկու փուլերի ընթացքում ըստ առաջացած կարիքի ու ավելի լայն լսարանի համար:
Այս փուլում նախատեսվում է ունենալ համայնքային մարդաշատ հանդիպումներ, ներկայացնել Հիմնադրամի տեսլականը ու ռազմավարական ուղղությունները, ապահովել Հիմնադրամի ծրագրերի ճանաչելիության բարձրացումն ու պոտենցիալ շահառու խմբերի ընդարձակումը:

Արդյունքներ

Ակնկալվող կարճաժամկետ արդյունքներն են.

- Մարզերում և Երևանում առնվազն նոր 2500 ուսուցչի ներգրավում

- «Brainograph»-ի գործիքակազմից հմտորեն օգտվելու կարողությունների զարգացում

- «Brainograph»-ի տարածում

- Մարզային վերապատրաստումներին լիարժեք մասնակցած ու ավարտած հավաստագրված ուսուցիչների համայնքի ընդլայնում*

-Մենթորական ծրագրի շրջանավարտներից Հիմնադրամի համար մենթոր-ուսուցիչների կերտում

Վերապատրաստումների արդյունքում մարզային հանդիպումներին մասնակցած ուսուցիչները կկարողանան՝

- *տիրապետել «Brainograph» հարթակին՝ որպես ՀՊՀ բոլոր վերջնարդյունքների ապահովման համապարփակ գործիք*
- *տիրապետել արդի կրթական ռազմավարություններին, մեթոդներին և հնարներին,*
- *տիրապետել 21-րդ դարի դասավանդման հմտություններին,*
- *տիրապետել արդի կրթական գործիքներին և տեխնոլոգիաներին,*
- *տիրապետել «Brainograph» հարթակի ավելի լայն հնարավորություններին:*

Ակնկալվող երկարաժամկետ արդյունքներն են.

- 1000 ուսուցչի մասնագիտական վերապատրաստում

- Տարբեր առարկաներ դասավանդող (պատմություն, արվեստ, կենսաբանություն, գրականություն և այլն) ուսուցիչների համար համագործակցության գործուն հարթակի ապահովում և մասնագիտական համայնքի ձևավորում, որը կնպաստի միջառարկայական կապերի զարգացմանը, կխթանի համատեղ նախագծերի ստեղծմանը:

- Հիմնադրամի ծրագրերի փոխադրեցության մեծացում, կայունացում

- Համայնքներին՝ նրանց խնդիրներով և կարողություններով հանդերձ ներսից ճանաչելու հնարավորություն

- Հիմնադրամի մենթորական համայնքի կարողությունների և փորձառության բարձրացում

- Հանրակրթական ոլորտում ուսուցիչներից ձևավորված մենթորական համայնքի կայունացում և իզորացում

Մարզային հանդիպումների եռաստիճան փուլի ավարտին ուսուցիչները կունենան՝

- *պատկերացում արդի կրթության զարգացման միտումների մասին,*
- *պատկերացում սեփական դերի ու գործառույթների մասին,*
- *կրթության շուրջ լայն աշխարհայացք,*
- *կրթական ռեսուրսներ ստեղծելու փորձառություն և հմտություն,*
- *նորարարությունները դասապրոցեսում ներդնելու հմտություն,*
- *գործընկերներին իրենց փորձառությունը փոխանցելու կարողունակություն և կամք:*

---

* Վերապատրաստումների բոլոր բաղադրիչներին մասնակցած և ավարտական հայտորոշող տեստի արդյունքում դրական միավորներ ստացած ուսուցիչները կստանան նաև հավաստագրեր:

Արդյունքների հատկանիշների չափման մեթոդիկա

Քանակական ցուցիչներ (KPI)

- Ուսուցիչների մասնակցության թիվ (լրացուցիչ՝ ըստ մարզերի)
- Հավաստագրեր վաստակած ուսուցիչների թիվ
- Վերապատրաստումներից հետո տվյալ ուսուցիչների գրանցումն ակտիվությունը հարթակում՝ ըստ թվերի
- Վերապատրաստումներին մասնակից ուսուցիչների՝ հարթակի գործածության և ակտիվություն տվյալներ՝ ըստ Հիմնադրամի մոնիթորինգի տվյալների

Որակական ցուցիչներ

- Մասնակիցների կարծիքների և առաջարկների գնահատում
- Մենթոր-ուսուցիչների ու մասնակից ուսուցիչների հաջողությունների, միկրոպատմությունների հավաքագրում, ներկայացում
- Ինտեգրված 21-րդ դարի հմտությունների չափանիշային վերլուծություն ըստ հարցախույզերի ու հայտորոշումների

Իրականացման մեխանիզմներ

Ծրագիրն իրականացվելու է կենտրոնական գրասենյակից կառավարման, համակարգման և մշտադիտարկող այցերի միջոցով: Ծրագրի առանցքը ՀՀ մարզերում և Երևանում Հիմնադրամի կողմից հավատարմագրված մենթոր-ուսուցիչների գործառույթներն են:

Ծրագրի հավելյալ արժեքը՝

- Ծրագրի արդյունքում ինչպես Հիմնադրամն, այնպես էլ ՀՀ կրթական համակարգը կունենան գործուն ու կայացած մենթոր-ուսուցիչների մի ցանց
- Ծրագրի արդյունքում կձևավորվեն ազգային կրթական կարիքներին համահունչ կրթական ռեսուրսներ և մոդուլներ
- Ծրագիրը կնպաստի մարզային մենթոր - ուսուցիչների սոցիալական բարեկեցության ապահովմանը թե՛ դիրքավորման տեսանկյունից, թե՛ աշխատանքային հնարավորությունները բազմազանեցնելու առումով
- Ծրագիրը կարող է գրավել համանման գործառույթներ ու առաքելություն ունեցող կազմակերպությունների ուշադրությունն ու միավորել նրանց ջանքերը տարբեր կոմպոնենտներում